Հայկական ժամանակ
№17 (2654), հունվար 30, հինգշաբթի

ԹԵՍՏՐՈՆՈՄԻՈՒՄ

ԳԱԱ-Ն՝ ՀԱՐԿԱԴԻՐ ՊԱՐԱՊՈՒՐԴՈՒՄ

Քոչարյանն ակադեմիային պարտք է 2 մլն դրամ

ՀՀ գործող նախագահ եւ նախագահի թեկնածու Ռոբերտ Քոչարյանի նախընտրական շտաբի անդամներին նեղություն չտալու համար ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան արձակուրդի է ուղարկել ԳԱԱ նախագահության բազմաթիվ աշխատակիցներին:

*Իրենց աշխատասենյակները Քոչարյանի նախընտրական շտաբի տեսչ Սերժ Սարգսյանին ու նրա տեղակալ Հովիկ Աբրահամյանին զիջելու համար արձակուրդ են գնացել անգամ ակադեմիայի երկու փոխնախագահները՝ Յուրի Շուքուրյանն ու Էմիլ Գաբրիելյանը: Իհարկե, պարոն Շուքուրյանն արդեն մոտ երկու օր է, վերադարձել է արձակուրդից, բայց ստիպված է աշխատել այլ սենյակում: Մենք արդեն տեղեկացրել ենք, որ շտաբի պատճառով կազմալուծվում է ակադեմիայի ողջ աշխատանքը, իսկ այնտեղ տիրող նախընտրական թոհուբոհը մեծ դժգոհություն է առաջացրել ակադեմիայի աշխատակիցների շրջանում: Սրա պատճառներից մեկն էլ այն է, որ նախընտրական շտաբին տեղ տալու համար ակադեմիան ստիպված է եղել ազատել արտաքին հարաբերությունների վարչության, Ֆինվարչության, ակադեմիկոս-քարտուղարի, փոխնախագահի ու նախագահի խորհրդականների եւ այլ աշխատասենյակներ: Բայց որոնեսզի Քոչարյանի մարդիկ իրենց շատ ավելի ազատ զգան, եւս մի քանի սենյակ ազատելու համար արձակուրդի չմեկնած ԳԱԱ աշխատակիցները ստիպված են մի քանի հոգով մեկ սենյակ կիսել: Շտաբի անդամների ելումուտն ակադեմիա ավելի դյուրին դարձնելու համար ԳԱԱ ղեկավարները ստիպված են լինում օրը մի քանի անգամ մաքրել տալ շենքի աստիճաններն ու շրջակայքը՝ այն դեպքում, երբ նախկինում դա անում էին օրը կամ մի քանի օրը մեկ անգամ: Բնականաբար, կատարված հավելյալ աշխատանքի դիմաց համապատասխան աշխատակիցները չեն վարձատրվել առ այսօր: Բայց ակադեմիայի համակարգում աշխատող գիտնականների ու գիտաշխատողների համար ամենավիրավորականն այն է, որ նախագահության շենքից ու դրա շրջակա մի քանի շենքերից բացի, ԳԱԱ համակարգում գործող ոչ մի ինստիտուտում ջեռուցում չկա: Իսկ այդ տիսիք ակադեմիան տասնյակներով ունի: Այն ժամանակ, երբ նախագահությունում շոգից չխեղդվելու համար ստիպված են լինում պատուհան բացել, ԳԱԱ մյուս մասնաշենքերում մարդիկ ստիպված են օրումեջ աշխատանքի գնալ, այն էլ՝ մի երկու ժամով: Չնայած այս դժգոհություններին, ԳԱԱ նախագահության ղեկավարները կարծես թե ցնծության մեջ են: Նրանց ոգեւորել է Քոչարյանի շտաբի հետ կնքած գործարքը, որով վերջիններս, ըստ ակադեմիայի գործերի կառավարիչ Էմիր Գեւորգյանի, պարտավորվել են ակադեմիային ամսական մեկ միլիոն 75 հազար 200 դրամ վճարել: Գեւորգյանի ասելով՝ իրենց վճարելու են երկու ամսվա համար՝ շտաբին հատկացված 12 սենյակի դիմաց: Գումարը, սակայն, առայժմ չի փոխանցվել: Ամենայն հավանականությամբ, այդ գումարից հավելավճարներ կստանան ակադեմիայի աստիճաններն ու շրջակայքն անդադար մաքրող մարդիկ: Երեկ այս մասին ասաց ԳԱԱ գործերի կառավարիչը: Ստացվում է, որ Քոչարյանի շտաբի միջոցով ստացված գումարների մի մասը կրկին նույն շտաբի կարիքների համար է ծախսվում: Ինչ վերաբերում է շտաբի պատճառած անհարմարություններին, երեկ էլ մի Գեւորգյանը փորձում էր մեզ համոզել, թե այժմ արձակուրդ գնալու ամենահարմար ժամանակն է, եւ իրենք աշխատել են պահն օգտագործել: ԳԱԱ գործերի կառավարիչը, որը, ի դեպ, ստորագրել է պայմանագիրը, համաձայն չէ նաեւ այն կարծիքի հետ, թե շտաբն իրենց անհարմարություններ է պատճառում: Ի՞նչ իմանար պարոն Գեւորգյանը, որ իր հայտարարությունից ընդամենը մի քանի րոպե առաջ ակադեմիայի աշխատակիցներից մեկը «բերանից թոցրել էր», որ իր աշխատասենյակը իրենից խլել են:

Ինչեւէ, փաստը մնում է այն, որ ակադեմիան իր գործերով զբաղվելու փոխարեն ստիպված է բավարարել Ռոբերտ Քոչարյանի նախընտրական շտաբի պահանջները: Սա է, թերեւս, պատճառը, որ ակադեմիան սկսել է հրատարակել այնպիսի գրքեր, որտեղ «առանց» բառը գրվում է «ձ» տառով, «աշխարհ» բառն առանց «հ» տառի... կամ տեղ են գտնում այնպիսի արտահայտություններ, ինչպես «պատկառելի կայսերական ավարտման դիպլոմը», «Ռուսաստանի Դաշնակցության պետական մրցանակ» եւ այլն: Համենայնդեպս, երեկ այնպիսի տպավորություն էր, որ շենքի տերերը ոչ թե ակադեմիայի աշխատակիցներն են, այլ նախընտրական շտաբի անդամները, որոնք ԳԱԱ աշխատակիցների վրա անգամ ծխելու համար «մուննաթ» էին գալիս:



Հ.Գ. Հանուն արդարության պետք է խոստովանել, սակայն, որ ընտրություններից ազատ ժամանակահատվածում ԳԱԱ-ն առանձնապես «աշխարհը դեսը» չի անում: Հիշեցնենք նաեւ, որ Ռ. Քոչարյանի նախընտրական շտաբը ԳԱԱ-ում տեղակայված է եղել նաեւ 1998 թվականի նախագահական ընտրություններում: Այստեղ է տեղակայված եղել նաեւ «Միասնության» նախընտրական շտաբը՝ 1999 թվականի խորհրդարանական ընտրություններում: Ըստ ամենայնի, Ռ. Քոչարյանը որպես նախընտրական շտաբ ԳԱԱ շենքը ընտրել է նաեւ հավատալով, որ այն հաջողություն է բերում ընտրություններում:

ԼԲ.